ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացումը իրադրային խաղերի միջոցով

Հետազոտող ուսուցիչ՝ Մարիամ Ենոքյան

ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Իրադրային խաղերի ընդհանուր բնութագրումը և նրանց կրթադաստիարակչական գործառույթները խոսքի զարգացման գործընթացում……□□□□□□□□□□□□…….5

Իրադրային խաղերի կազմակերպման մեթոդիկան……9

Եզրակացություններ……..……..20

Օգտագործված գրականության ցանկ……21

Հավելված……23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վեց տարեկան կրտսեր դպրոցականը գտնվում է անցումային փուլում, երբ նախադպրոցական տարիքին հատուկ առաջատար գործունեությունը՝ խաղը, փոխվում է ուսումնական գործունեության, իսկ խաղը որպես կանոն մղվում է երկրորդ պլան՝ պահպանելով իր դերակատարությունը երեխայի կյանքում: Ռուս մանկավարժ Վ. Վոլիանան համոզված է, որ հաճախ դպրոցականների ցածր գրագիտության պատճառներից մեկն էլ այն է, որ տարրական դպրոցում ըստ անհրաժեշտության ուշադրություն չի դարձվում խաղային մեթոդներին, և անցումն ուսումնական գործունեությանը կատարվում է միանգամից, ինչի հետևանքով մայրենի լեզուն հաճախ երեխաների համար դառնում է չոր և ձանձրալի՝ կազմված միայն ուղղագրության և կետադրական նշաններից: [20,3]: Աշակերտները ուսումնական գործունեության ընթացքում ցուցաբերում են ակտիվություն, երբ այն անցկացվում է խաղային մեթոդներով և այդ ձևով ստացած գիտելիքները հիմնարար են դառնում աշակերտի համար, քանի որ նա հաճույքով է դրանք սովորում: Մեր հիմնախնդիրն է իրադրային խաղերի միջոցով նպաստել կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացմանը:

Թեմայի արդիականությունը:

Մեր աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է արդի հասարակական-քաղաքական-տնտեսական պայմաններում անձի հաղորդակացական կարողության դերով և այդ համատեքստում՝ դեռևս տարրական դպրոցից կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման անհրաժեշտությամբ:

Մեր ուսումնասիրության նպատակն է մշակել և փորձարկել կրտսեր դպրոցականի խոսքի զարգացմանը նպաստող իրադրային խաղերի համակարգ:

Առաջադրված խնդիրները.

1. Ուսումնասիրել աշխատանքի հիմնախնդրի վերաբերյալ առկա գիտամեթոդական գրականությունը, դիտարկել դրանցում ներկայացված սկզբունքները:
2. Ուսումնասիրել և վերլուծել ՀՀ տարրական դպրոցի պետական կրթական չափորոշիչները և մայրենիի առարկայական ծրագիրը, ինչպես նաև մայրենիի գործող դասագրքերը:

3. Ուսումնասիրել և դիտարկել տարրական դպրոցում՝ մայրենիի դասերին կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի զարգացման գործընթացը, պարզել կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի զարգացվածության մակարդակը:
4. Մշակել և փորձարկել կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը նպաստող իրադրային խաղեր:
5. Ներկայացնել իրադրային խաղերի արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Մեր ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները.

- Հիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության ուսումնասիրում
- Դասալսումներ և արդյունքների վերլուծություն.
- Հարցախույզ տարրական դասարանների ուսուցիչների շրջանում.
- Ընտրված, մշակված մեթոդների, իրադրային խաղերի փորձարկում և արդյունքների վիճակագրական վերլուծություն.
- Փորձարարական դասերի վարում

Ուսումնասիրության գործնական նշանակությունը կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացմանը նպաստող իրադրային խաղերը կարող են կիրառվել տարրական դասարաններում:

Փորձարարական բազան: Մեր ուսումնասիրությունները իրականացրել ենք ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմնական դպրոցի երկրորդ դասարանում:

ԻՐԱԴՐԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Կրտսեր դպրոցական տարիքում իրենց ուրույն տեղն ունեն դերային, իրադրային խաղերը: Խաղի ընթացքում որոշակի դերակատարումը սովորողին դրդում է երևակայական իրադրությունում վերարտադրել կոնկրետ մարդու վարքը: «Իրադրային խաղերի ժամանակ աշակերտներին առաջարկվում է տարբեր ստեղծագործություններից կամ այլ իրադրություններից ընտրել զանազան դերեր, խաղալ կարճ խոսքային դրվագներ, որպես կանոն՝ պրոբլեմային: Իրադրային խաղերի ժամանակ մասնակիցները ստանձնում են որևէ դեր, սեփականում որևէ տեսակետ և փորձում են այն հասունացնել և ավարտել:» [8, էջ 272]: Իրադրային խաղի բովանդակության մեջ ներկայացվում են ինչպես մարդու գործունեության տարբեր ոլորտները, այնպես էլ նրա դրսևորումները և հասարակական հարաբերությունները:

Այս խաղերը մեծ դեր են կատարում նաև կրտսեր դպրոցականի դպրոցական դաստիարակության գործում: Դրանք նպաստում են, որ սովորողն ավելի գիտակցաբար լավ և արագ յուրացնի վարքի որոշակի կանոնները: Խաղն ամենից առաջ այնպիսի գործունեություն է, որի ընթացքում երեխան սկսում է կողմորոշվել մարդկանց կյանքի, նրանց սոցիալական գործառույթների հարաբերությունների ամենաընդհանուր և հիմնական դրսևորումի շրջանակում: Եվ արդյունքում՝ ինքն էլ զարգանում և դաստիարակվում է: Այդ կերպ կարելի է ձևավորել երեխայի պահանջմունքների, դրդապատճառների ու նպատակների անհրաժեշտ համակարգ:

Իրադրային խաղերի ժամանակ երեխաները, ստանձնելով հասարարական դերեր, յուրացնում են վարքի կանոններ: Խաղը սովորեցնում է, փոխում, դաստիարակում «իր հետևից տանում է անհատի զարգացումը» [21, էջ 289]:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկը կրտսեր դպրոցականի խոսքի մշակույթի մշակումն ու զարգացումն է: Ուսուցման գործընթացի ողջ նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը մայրենիի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի միջոցով է, որ երեխան շրջապատող բնության ու

հասարակության մասին ստանում տեղեկություններ ու գիտելիքներ: Տարրական դասարաններում աշակերտների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում հիմնական շեշտը դրվում է բանավոր խոսքի զարգացման վրա: Ինչպես նշում է Ա. Տեր-Գրիգորյանը «Բանավոր խոսքը, որպես հաղորդակցման միջոց, ոչ միայն ամենահիմնականն է, այլև խոսքի մյուս դրսևորումների հիմքը և շրջապատի աշխարհի ճանաչման ու գնահատման գլխավոր չափանիշը:» [19, էջ 30]

Այս իմաստով բանավոր խոսքի զարգացումն ու կատարելագործումը երեխայի մեջ հսկայական կրթական ու դաստիարակչական նշանակություն ունի ոչ միայն խոսքի ու տրամաբանական մտածողության զարգացման, այլև գիտելիքների պաշարի հարստացման և ընդհանրապես նրա մտավոր կարողությունների զարգացման համար: Վեց տարեկան կրտսեր դպրոցականը գտնվում է կարծես անցումային փուլում: Դպրոց մտած կրտսեր դպրոցականի կյանքում առաջատար գործունեությունը դառնում է ուսումնականը, սակայն խաղը շարունակում է պահել իր դերակատարումը երեխայի կյանքում: Ուստի ուսուցչի առաջ խնդիր է ծառանում կազմակերպել ուսումնական գործընթացն այնպես, որպեսզի երեխային համար այն լինի հետաքրքիր: Աշակերտները ուսումնական գործունեության ժամանակ հաճույքով և հիմնարար են յուրացնում այն բոլոր գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որոնք ձեռք են բերում խաղի միջոցով: Գաղտնիք չէ, որ խաղի ժամանակ երեխաները անկաշկանդ են, նրանք անկաշկանդ են նաև իրենց խսքում՝ ազատ կառուցելով երկխոսություններ մենախոսություններ: Խաղի ժամանակ երեխաները կարողանում են ազատ և անկաշկանդ արտահայտել իրենց միտքը: Մեր նպատակն է իրադրային խաղերի միջոցով նպաստել կրտսեր դպրոցականի պասիվ բառաշարարի ակտիվացմանը, կապակացված խոսքի զարգացմանը: Կապակցված խոսքի զարգացման համար կարելի է ստեղծել իրադրություններ, հաղորդակցական երկխոսություններ, որոնք էլ կարող են նպաստել կրտսեր դպրոցական պասիվ բառապաշարի ակտիվացմանը և կապակցված խոսքի զարգացմանը: Մեր հիմնախնդիրն է իրադրային խաղերի միջոցով զարգացնել կրտսեր դպրոցականի կապակցված խոսքը: Այդ իսկ պատճառով էլ մեր հետզոտական աշխատանքի ժամանակ երեխաներին առաջարկել ենք իրադրային խաղեր, որոնց ժամանակ աշակերտները պետք է փնտրեն գտնեն լուծումներ՝ գործի դնելով իրենց ստեղծագործական մտածողությունը և ներկայացնեն այդ

իրադրությունը՝ ըստ համապատասխան առաջադրանքների: Այստեղ մեծ է նաև ուսուցչի դերը, քանի որ այս պարագայում նա ուղղորդողի դերում է՝ ով պետք է ուղղի, շտկի կրտսեր դպրոցականի խոսքային անհարթությունները:

Ջ. Գյուլամիրյանը կարծում է, որ «իրադրային խաղերը շահեկան է կազմակերպել ինչպես ուսումնական նյութի իմաստավորման փուլում, այնպես էլ կշռադատման փուլում՝ աշակերտներին տալով հնարավորություն ձեռք բերած գիտելիքները կիրառելու: Դերային խաղերը հաճախ կիրառվում են միջանձնային կարողությունների զարգացման նպատակով:» [8, էջ 273]

Խնդրահարույց իրադրությունների լուծումը նպաստում է խոսելու ցանկությանը և ասելիքի պատճառաբանվածության ապահովմանը, զարգացնում է խոսքային գործունեության մեջ արագ կողմնորոշվելու կարողությունը: Այն նաև խթանում է սովորողների հաղորդակցական ակտիվությունը, քննադատական և վերլուծական մտածողությունը, փաստարկելու, խոսակցին համոզելու կարողությունները, իրավիճակներին մտածված լուծումներ առաջարկելու, ելքեր որոշելու կարողությունը:



Յուրաքանչյուր երեխա խաղային իրավիճակն ընբռնում է յուրովի՝ գործի դնելով վերլուծական և քննադատական մտածողությունը՝ բացահայտում է տրամաբանական

ելքեր: Հաճախ երեխաներին առաջարկվում է իրադրություններ իրենց առօրյա կյանքից: «Իրադրությունները նպաստում են երեխաների սոցիալականցմանը, ձևավորում են բարոյական մի շարք որակներ /հանդուրժողականություն, բարություն, համբերատարություն և այլն/: Իրադրային խաղերի ժամանակ աշակերտները հայտվելով տարբեր իրադրություններում արտահայտում են տարբեր զգացումներ՝ ուրախություն, տխրություն, հիացմունք:» [5 էջ 2]

Այսպիսով՝ դերային, իրադրային խաղերը նպաստում են սովորողների այնպիսի կարևոր որակների ձևավորմանն ինչպիսիք են՝

- հաղորդակցվելու, անձնական կարծիքներն արտահայտելու կարողությունը,
- սեփական պահանջմունքները խոսքով արտահայտելու համար անհրաժեշտ բառապաշարի հարստացմանը
- վերլուծական-համադրական, քննադատական մտածողության զարգացմանը,
- ստեղծագործական մտքի խթանմանն ու զարգացմանը,
- սոցիալականացման ու արժեհամակարգի ձևավորմանը:

Մեր դասալսումների և մանկավարժական պրակտիկայի ընթացքում իրականացրած հատուկ ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ իրադրային խաղերի միջոցով սովորողները ձեռք են բերում համագործակցային կարողություններ ու հմտություններ, տարբեր իրավիճակներում ելքեր որոշելու, լուծումներ ներկայացնելու կարողություն, զարգանում է երեխաների բառապաշարն, ինքնարտահայտվելու, ինքնադրսևորվելու կարողությունները:

Այպիսով՝ իրադրային խաղերը խթանում են սովորողների ուսումնական դրդապատճառները: Հնարավորություն են տալիս սովորողներին մտածել, ստեղծագործել, քննարկել և վերլուծել, ինչի արդյունքում էլ զարգանում է վերլուծական, ստեղծագործական մտածողությունը: Զարգանում են խոսք կառուցելու կարողությունները, հաղորդակցական հմտությունները, հարստանում է բառապաշարը և մի շարք այլ որակներ, որոնք երեխային ուղեկցելու են և օգնության են գալու ամբողջ կյանքի ընթացքում:

ԻՐԱԴՐԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Մեր աշխատանքի հիմնախնդրի շրջանակներում փորձել ենք պարզել 2-րդ դասարանի աշակերտների խոսքի զարգացվածության մակարդակը: Աշխատանքն իրականացնելու համար ընտրել ենք հատուկ մշակված մեթոդիկա [23, էջ 216-223]:

Աշակերտների խոսքի զարգացվածության մակարդակը բացահայտելու համար կատարել ենք հետևյալ առաջադրանքը. ցուցադրել ենք նկար [տե՛ս հավելված 1] և աշակերտին հանձնարարել պատմել նկարի բովանդակությունը: Առաջադրանքի կատարման համար ընտրել ենք այնպիսի նկար որտեղ կան մարդիկ, գործողություններ, առարկաներ: Աշխատանքը իրականացրել ենք անհատական՝ թվով 35 աշակերտ:

Պատասխանները գրանցելիս ուշադրություն ենք դարձնել աշակերտի խոսքում գործածած բառերին՝ ըստ խոսքիմասային դրսևորման:

Նկարի ցուցադրումից հետո աշակերտներին տրվեց 2 րոպե ժամանակ՝ նկարը ուսումնասիրելու համար: Այնուհետև պատմում էին նկարի բովանդակությունը: Առաջադրանքի կատարման ընթացքում հնչած պատասխանները խիստ տարբեր էին: Կային երեխաներ, որոնք մանրամասն պատմում էին նկարի բովանդակությունը՝ խոսքում գործածելով գրեթե բոլոր խոսքի մասերը: Չնայած առաջադրանքն առանձնապես դժվարություն չէր ներկայացնում, սակայն աշակերտների մի մասը չէր կարողանում կապակցված խոսք կառուցել. պարզապես թվարկում էր այն ինչ տեսնում էր նկարում: Աշակերտների մի մասն էլ նկարի բովանդակությունը վերարտադրեց մեր կողմից հնչեցրած հարցերի միջոցով:

Առաջադրանքի կատարումից հետո արձանագրեցինք հետևյալ արդյունքները

Աշակերտների խոսքի զարգացվածության մակարդակ մակարդակ	Աշակերտներ	
	n=35	%
Շատ բարձր	5	14
Բարձր	9	26

Միջին	12	34
Ցածր	9	26
Շատ ցածր	0	0

Ստացված արդյունքները ներկայացնենք տրմագրի տեսքով.



Հետազոտության տվյալների արձանագրումից պարզ դարձավ, որ գրեթե բոլոր աշակերտների խոսքում գերակշռում են գոյական, բայ, ածական խոսքերի մասերը, համեմատաբար առավել քիչ են գործածում թվական, դերանուն մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն, վերաբերական խոսքի մասերը:

Աշակերտները նկարի բովանդակությունը վերարտադրելիս իրենց խոսքում հաճախ կիրառում էին օտարալեզու բառեր, օրինակ՝ բեռնատար-грузовик, օդապարուկ- воздушный змей, արկղ- ящик: Ուշադրություն դարձնելով աշակերտների կապակցված խոսքին՝ դասալսումների ժամանակ նկատեցինք, որ աշակերտներն իրենց խոսքում հաճախ են կիրառում օտարալեզու բառեր: Այդ նպատակով հարցում անցկացրինք ծնողների շրջանում՝ պարզելու համար պատճառները: Հարցման արդյունքներից ելնելով հիմնական պաճառն այն էր, որ երեխաները տանը հաճախ էին դիտում օտարալեզու մուլտֆիլմեր:

Առաջ քաշված խնդրի համար կազմեցինք մի քանի առաջադրանքներ, որպեսզի աշակերտների բառապաշարը որքան հնարավոր է մաքրենք օտարաբանություններից: [Առաջադրանքները տե՛ս հավելված 3]:

Խոսքի զարգացվածության մակարդակը պարզելուց հետո՝ սկսեցինք փորձարկել մեր կողմից կազմած իրադրային խաղերը, որոնք նպատակ ունեին զարգացնել կրտսեր դպրոցականների խոսքը: Ներկայացնենք իրադրային խաղերի մի քանի օրինակներ, որոնք իրականացրել ենք Վահան Թոթովենցի անվան ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցում մեր մանկավարժական պրակտիկայի շրջանակներում:

Մայրենիի դասագործընթացում տվյալ իրադրային խաղերի կազմակերպելու նպատակն էր՝

ա) զարգացնել աշակերտների կապակցված խոսքը՝ որոշակի թեմայի շրջանակներում երեխաներին առաջակելով իրադրություն,

բ) պասիվ բառապաշարի ակտիվացումը,

Օրինակ 2-րդ դասարանում «Տեսնես՝ լա՞վ է, թե վա՞տ» թեմատիկ խմբի ուսումնասիրման ժամանակ, Լևոն Միրինջանյանի «Զրույց հեռախոսով» [17, էջ50] դասի ուսուցման իմաստավորման փուլում մենք կազմակերպեցինք «Զրույց հեռախոսով» [նկարները տե՛ս հավելված 4] իրադրային խաղը: Ինչպես նշեցինք, աշակերտները դեռևս նախայբբենական փուլից ծանոթ էին դերային, իրադրային խաղերին՝ ուստի խաղն իրականացրինք առանց դժվարությունների: Խաղի նպատակն է զարգացնել երեխաների բառապաշարը, ինքնուրույն խոսք կառուցելու կարողությունը, ձևավորել նրբանկատություն,զարգացնել աշակերտների երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը և խոսքում «Կախարդական» բառերի կիրառման կարևորությունը: Ներկայացնենք վերոնշյալ թեմայով կազմակերպված իրադրային խաղը:

Իրադրություն «Զրույց հեռախոսով»

Կազմակերպման նպատակները

- Ուսուցողական: Սովորեցնել քաղաքավարի արտահայտություններ, բարեկիրթ արտահայտություններով երկխոսություններ վարելու մշակույթ:
- Դաստիարակչական: Զևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ վարվելակերպ:
- Զարգացնող: Զարգացնել նրբանկատության զգացմունքները:

Աշխատանքային նյութեր

Թղթից պատրաստված հեռախոս:

Բացատրություն

Խաղն իրականացվում է երկու աշակերտների մասնակցությամբ

Ընթացքը

Իրադրության համար աշակերտներին տրվում է 3-5 րոպե:

Դասից բացակայած աշակերտին հարկավոր է իմանալ օրվա հանձնարարված դասերը:

Առաջադրանք

ա) Ինչպե՞ս պետք է բացակայող աշակերտը խնդրի ընկերոջը, որպեսզի իմանա հանձնարարված դասերը:

բ) Ի՞նչ կախարդական բառեր կօգնեն աշակերտներին:

Իրադրության վերլուծություն ֆրոնտալ կերպով, բոլոր աշակերտների մասնակցությամբ:

Որոշակի թեմատիկայի շրջանակներում իրադրային խաղերի միջոցով մենք փորձեցինք խթանել կրտսեր դպրոցականի կապակցված խոսքի զարգացումը: «Զրույց հեռախոսով» իրադրության ժամանակ աշակերտները գործածում էին՝ «խնդում եմ, եթե կարելի է, եթե դժվար չէ, շնորհակաություն, եթե զբաղված չես» արտահայտությունները: Իրադրությունը ներկայացվեց երեք անգամ՝ տարբեր զույգերի դերակատարմամաբ: Ուշագրավ էր այն, որ աշակերտները մեկը մյուսից ընդօրինակում էին նոր արտահայտությունները և իրենց խոսքում ևս գործածում: Վերջին զույգն արդեն իրադրությունը ներկայացրեց առավել հստակ և ձևակերպված խոսքով՝ խոսքում կիրառելով առավել գեղեցիկ արտահայտություններ:

Իրադրությունը նպաստեց նաև ստեղծագործության գաղափարի ընկալմանը, քանզի աշկերտները զուգորդումներ անցկացրին իրենց կենսափորձի հետ, զգացին իրենց խոսքի հակիրճության և հստակության կարևորությունը:

Իրադրային խաղերի իրականացման ժամանակ մենք առանձնացրել էինք նաև «դիտորդների» մի խումբ, որը զբաղվում էր իրականացված գործունեության վերլուծությամբ և գնահատմամբ: Իհարկե, միօրինականությունից խույս տալու նպատակով կատարեցինք դերային փոխանակումներ դիտորդների և իրադրությունը ներկայացնողների միջև: Իրադրային խաղերին տրամադրված հիմնական ժամանակը հատկացրինք բուն իրադրության կատարմանը՝ այնուհետև դրա վերլուծությանը: Վերլուծությունը կատարվում է ֆրոնտալ ձևով՝ աշակերտների հետ միասին, դասարանում, որտեղ յուրաքանչյուր աշակերտ կարողացավ արտահայտել իր տեսակետը: Քննարկման արդյունքում աշակերտները նախ հանգեցին այն տեսակետին, որ չի կարելի հեռախոսով շատախոսել, այլ պետք է անցնել բուն թեմային: Ինչ-որ բան խնդրելիս պետք է ուշադրություն դարձնել խոսքին՝ կիրառելով «կախարդական» բառեր խոսքում, համոզել այնպես, որ դիմացինը ցանկություն ունենա օգնել: Ըստ ծրագրային պահանջների [17, 14էջ] «Զրույց հեռախոսով» բնագրի նպատակներից է նաև ամրակայել հատկանիշ ցույց տվող բառերի մասին ունեցած գիտելիքները՝ ուստի իրադրային խաղի ժամանակ մենք երեխաների ուշադրություն ուղղեցինք նկարագրական խոսքում դրանց կիրառմանը:

Իրադրություն «Կապույտ տերևներ»

<u>Կազմակերպման նպատակները</u>

- Ուսուցողական: Սովորողների բառապաշարում «կախարդական» բառերի ակտիվացում
- Դաստիարակչական: Զևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ վարվելակերպ:
- Զարգացնող: Զարգացնել նրբանկատության զգացմունքները:

<u>Բացատրություն</u>

Խաղն իրականացվում է երկու աշակերտների մասնակցությամբ (Սոնա և Աննա)

Ընթացքը

Իրադրություն

Ենթադրենք Սոնան Աննային տվել է մատիտները:

Առաջադրանք

Ինչպիսի՞ ընթացք և ավարտ կունենա պատմությունը:

Ներկայացնենք ներկայացված իրադրություններից մեկը.

Մինչ իրադրային խաղը ներկայացնելը՝ աշակերտները բարձրաձայն ընթերցեցին Վ. Օսևայի «Կապույտ տերևներ» ստեղծագործությունը [17, էջ 52], քննարկեցինք, թե ինչպես պետք է Աննան տար Սոնային մատիտները, որպեսզի նա վերցներ: Իրադրությունները ներկայացնելիս աշակերտներն իրենց խոսքում կիրառում էին «Եթե կարելի է, խնդրում եմ, եթե քեզ դժվար չէ, սիրով, խնդրեմ, շնորհակալություն և այլն» արտահայտությունները: Իրադրության ներկայացումից հետո աշակերտները արտահայտեցին, իրենց կարծիքը՝ նշելով թե ինչ արտահայտչամիջոցներ կարելի է կիրառել նման դեպքերում, որպեսզի չնեղացնենք մեր ընկերներին: Իրադրությունը ներկայացնելուց հետո աշակերտներից մի քանիսի կարծիքով Աննան ուզում էր տալ մատիտները, սակայն սխալ ընտրված բառերի, արտահայտությունների միջոցով նեղացրեց իր ընկերուհուն: Իրադրության ներկայացումից հետո կատարեցինք իրադրության վերլուծություն և քննարկում: Քննարկման ժամանակ աշակերտները հանգեցինք այն տեսակետին, որ «Կախարդական» բառերը, սիրալիր վերաբերմունքը կարող են ամեն ինչ փոխել: Եվ, որ պետք է միշտ բարությամբ լցվել դիմացինի հանդեպ, լինել կարեկցող և կամեցող և ամեն կերպ պահել լավ ընկերությունը:

Իրադրություն «Մի անգամ եթերում»

Կազմակերպման նպատակները

- Ուսուցողական: Սովորոցնել տեղեկույթը բանավոր կերպով ներկայացնելու կարողություն:
- Դաստիարակչական: Զնավորել հաղորդակցական կարողություններ
- Զարգացնող: Զարգացնել նրբանկատության զգացմունքները:

Աշխատանքային նյութեր

Թղթից պատրաստված հեռուստացույց:

Բացատրություն

Խաղն իրականացվում է երկու աշակերտների մասնակցությամբ (հաղորդաշարի հյուր և հաղորդավար)

Ընթացքը

Իրադրություն

Դուք «Ինպես խնամել կենդանիներին» հաղորդման հյուրն եք և պետք է ներկայացնեք ձեր սիրելի կենդանու խնամքը՝ պատասխանելով նաև հաղորդավարի հարցերին:

Առաջադրանք

ա)Ներկայացրե՛ք փոքրիկ տեղեկույթ ձեր սիրելի կենդանու մասին:
բ)Ներկայացրե՛ք, թե ինչպես պետք է խնամել նրան և ի՞նչ կսովորեցնեիք:

Մինչ իրադրային խաղը՝ աշակերտներին որպես տնային աշխատանք հանձնարարվել էր դուրս գրել փոքրիկ տեղեկույթ իրենց սիրելի կենդանու մասին: Իրադրությունը ներկայացվեց՝ տարբեր զույգերի դերակատարմամբ [նկարները տե՛ս հավելված 4]: Զույգերին տրվեց 5-6 րոպե ժամանակ: Իրադրային խաղին չմասնակցող երեխաները, ովքեր որպես հանդիսատես էին, կարողանում էին իրենց հետաքրքրող հարցերը հնչեցնել «հաղորդաշարի հյուրին»: Հարցերը ձևակերպելիս աշակերտներից մի քանիսը սխալներ թույլ տվեցին՝ նախադասությունը սկսելով «քանի որ, որ, որովհետև, որպեսզի» շաղկապներով: Սխալների ուղղեցինք տեղում, որպեսզի աշակերտները կարողանան ճիշտ ձևակերպել իրենց խոսքը: Իրադրությունը ներկայացնելիս, երբ աշակերտները ներկայացնում էին, թե ինչպես պետք է խնամել կենդանուն, կիրառում էին ՝ «Իմ կարծիքով», «Ես մտածում եմ», «առավել ճիշտ կլինի» արտահայտությունները: Անցած իրադրությունների ժամանակ դա այնքան էլ չէր նկատվում:

Իրադրությունը ներկայացնելիս առաջին զույգի աշակերտը իր խոսքում կիրառում էր հատկանիշ ցույց տվող բառեր(ճստիկ-պստիկ, ոսկեմարմնիկ, աշխույժ, արագաշարժ, զգայուն, բկլիկ), երբ նկարագրում էր իր սիրելի կենդանուն՝ Նեմա անունով ձկնիկին: Հաղորդավարի ուղղորդված և կազմակերպված հարցերն օգնում էին «Հյուրերին» համակարգված խոսել և ներկայացնել: Երկրորդ զույգն ներկյացնում

էր շների խնամքը, որի ժամանակ իր խոսքում ևս կիրառում էր հատկանիշ ցույց տվող բառեր՝(խելացի, ընկերասեր, փափկամազիկ, փամփլիկ, նեղացկոտ և այլն):

Իրադրություն վերցված էր աշակերտների առօրյա կյանքից, ինչն էլ նպաստեց, որ իրադրությունն իրականացնենք առանց դժվարությունների՝ փորձելով խթանել աշակերտների նկարագրական խոսքի զարգացումը և բառապաշարի հարստացումը:

Իրադրություն «Առողջ սնվելու կանոններ»

Կազմակերպման նպատակները

- Ուսուցողական: Սովորեցնել փաստարկներով ապացուցել սեփական տեսակետը:
- Դաստիարակչական: Ձևավորել հաղորդակցական կարողություններ և առողջ սնվելու էթիկա:
- Զարգացնող: Զարգացնել ստեղծագործական մտածողությունը, կապակցված խոսք կառուցելու կարողությունը:

Բացատրություն

Իրադրությունն իրականացվում է երկու աշակերտի մասնակցությամբ՝ բժիշկ և հիվանդ:

Ընթացքը

Իրադրություն

Ենթադրենք դու բժիշկ ես և մեր բնագրի հերոսը եկել է քեզ մոտ, որպեսզի նրան բուժես:

Առաջադրանք

ա)Ինչպե՞ս նրան կհամոզես, որ նա առողջ սնվի:

բ)Ինչպե՞ս կապացուցես, որ ոչ առողջ սնունդը վնասակար է առողջությանը և պետք է սպորտով զբաղվել:

Իրադրությունը կազմակերպելիս հանդիպեցի մի քանի դժվարությունների: Քանի որ չէի հանձնարարել նախապես տեղեկություններ հավաքագրել առողջ և վնասակար սննդի մասին, ուստի ոչ բոլոր երեխաները կարողացան իրադրության ժամանակ բերել հավաստի փաստարկներ, թե ինչու է պետք առողջ սնվել: Սակայն աշակերտներից մի քանիսը հիշում էին «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի «Առողջ սնունդ» դասից մի քանի տեղեկություն և կարողացան ճիշտ ձևով համոզել, թե ինչու է

պետք առողջ սնվել, և թե ինչին է առողջ սնունդը նպաստում: Աշակերտները արտահայտում էին հետևյալ մտքերը. «Եթե սնվենք առողջ, ապա թելադրությունները լավ կգրենք: Առողջ սնունդը նպաստում է մեր սրտի լավ աշխատանքին: Երբ մենք սնվում ենք չափավոր, մեզ ավելի լավ ենք զգում: Ֆիզիկական աշխատանքի շնորհիվ մենք մեզ առույգ ենք զգում:» Ուշագրավ է, որ երեխաները փաստարկները բերում էին իրենց առօրյա կյանքից: Օրինակ աշակերտներից մեկի կարծիքով, երբ նրանք ֆիզկուլտուրայի դաս են ունենում այդ օրն նա իրեն շատ առույգ և թարմ է զգում: Մյուսի կարծիքով, երբ առավոտյան ինքը գազար է ուտում այդ օրը անպայման դասը լավ է ընթերցում: Աշակերտներից մյուսն էլ կարծում էր, որ եթե բանջարեղենը և մրգերը, որոնք առողջ սնունդ են համարվում, օգտակար չլինեին մայրիկներն ամեն օր նրանց չէին տա, որպեսզի ուտեին:

Իրադրային խաղերին տրամադրված հիմնական ժամանակը հատկացրինք բուն իրադրության կատարմանը, այնուհետև դրա վերլուծությանը: Վերլուծությունը և քննարկումը կատարվում էր ֆրոնտալ ձևով՝ աշակերտների հետ միասին, դասարանում՝ որտեղ յուրաքանչյուր աշակերտ կարողացավ արտահայտել իր տեսակետը: Քննարկման արդյունքում աշակերտները եկան այն եզրահանգման, որ վնասակար սնունդը փչացնում է մեր օրգանիզմը, վնասում է առողջությունը, ինչի արդյունքում էլ մենք հիվանդանում ենք: Որքան առողջ սնվենք, այնքան կլինենք առավել առողջ և խելացի, քանի որ ճիշտ առողջ և չափավոր սնունդը նպաստում է մեր ուղեղի լավ աշխատանքին:

Ներկայացված իրադրային խաղերը կիրառել ենք մեր կողմից վարած մայրենիի դասերի ընթացքում:

Իրադրային խաղերի իրականացումից հետո, մենք նորից աշակերտներին առաջարկեցինք նույն նկար պատմությունը՝ կիրառելով նույն մեթոդիկան: Նպատակն էր պարզել, թե մեր իրականացրած իրադրային խաղերը որքանով են նպատսել կրտսեր դպրոցականների կապակցած խոսքի զարգացմանը: Ստորև տրամագրի տեսքով ներկայացնենք մեր անձանագրած արդյունքները իրադրային խաղերի կազմակերպումից հետո:

Աշակերտների խոսքի զարգացվածության մակարդակ	%
Շատ բարձր	17
Բարձր	29
Միջին	35
Ցածր	19
Շատ ցածր	0



Աշակերտների խոսքի զարգացվածության մակարդակ	արձանագրման փուլ	ամփոփիչ փուլ
	%	
Շատ բարձր	14	17
Բարձր	26	29
Միջին	34	35

Ցածր	26	19
Շատ ցածր	0	0



Ինչպես երևում է դիագրամից իրադրային խաղերի կազմակերպումից հետո արձանագրել ենք հետևյալ արդյուքները՝ ցածր մակարդակը նվազել է 7%-ով, միջին մակարդակը բարձրացել է 1%-ով, իսկ բարձր և շատ բարձր մակարդակներն աճել են 3%-ով: Շատ ցածր մակարդակը մնացել է նույնը ինչպես մինչ իրադրային խաղերը, այնպես էլ իրադրային խաղերի կազմակերպումից հետո: Մեր հետազոտական աշխատանքը մենք իրականացրել ենք մանկավարժական պրակտիկայի ընթացքում, ուստի մեր ժամանակը սուղ էր: Այնուամենայնիվ իրադրային խաղերը ունեցան իրենց դերակատարումը և նպաստեցին կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի որոշակի մակարդակի բարձրացմանը: Այս ցուցանիշը կարող է բարձրանալ միմիայն ուսուցչի համառ և հետևողական աշխատանքի արդյունքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Արտասահմանյան և հայկական գրականության մեջ մշտապես քննարկվող կրտսեր դպրոցականներ խոսքի զարգացման հիմնախնդիրն այսօր արդի մեթոդիկայում դիտարկվում է գործնականության տեսանկյունից՝ մասնավորապես այս կերպով տարբեր իրադրային պայմաններում երեխաների հաղորդակցական գործունեության հետ:
2. Համաձայն ՀՀ տարրական դպրոցի պետական կրթական չափորոշիչի և մայրենիի առարկայական ծրագրի՝ կապակցված խոսքի զարգացումը կարևոր խնդիր է հանդիսանում տարրական դասարաններում: Կապակցված խոսքի զարգացմանը նպատակաուղված տարաբնույթ աշխատանքներ ներառված են մայրենիի գործող դասագրքերում:
3. Ըստ կատարած դասալսումների և իրականացրած մեթոդիկայի՝ բացահայտեցինք, որ կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացվածության մակարդակը գտվում է միջին մակարդակում և այդ ուղղությամբ մշակել և իրականացնել ենք նպատակաուղված աշխատանք:
4. Ելնելով առկա խնդիրներից՝ մշակեցինք և փորձարկեցինք իրադրային խաղեր, որնոնք նպաստեցին կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացմանը:
5. Իրադրային խաղերը նպատակահարմար է իրականացնել ինչպես ԽԻԿ համակարգի իմաստավորման, այնպես էլ կշռադատման փուլում: Արդյունավետ է, երբ երեխաները իրադրության թեմային ծանոթ են և ունեն որոշակի տեղեկույթ տվյալ թեմայի մասին: Իրադրության ավարտից հետո անհրաժեշտ է այն քննարկել ֆրոնտալ կերպով՝ ամբողջ դասարանի հետ միասին, լսել երեխաների տեսակետները և քննարկել դրանք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Արշակյան Ա.** Դերային խաղերը երկխոսությունների ձևավորման գործընթացում, Նախաշավիղ 3-4, 2009.
2. **Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Գ.Հ** Մանկավարժական հետոզատությունների մեթոդաբանություն: Ուս. ձեռնարկ -Եր.: Արտագերս 2011, 179 էջ.
3. **Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Գ.Հ, Աստրյան Մ. Ա., Գևորգյան Մ. Մ., Կարապետյան Ն. Զ., Բաղդասարյան Ա. Ա.,** Մանկավարություն, Երևան, Արտագերս 2017, 360 էջ.
4. **Բալայան Ա.** 200 խաղ, Երևան 2017,112 էջ.
5. **Գասպարյան Լ.** Դերային խաղը կրտսեր դպրոցում, Դպիր մանկավարժական հանդես , համար 10 (74).
6. **Գյուլամիրյան Ջ. Հ.** Խոսքի զարգացում, Եր. Զանգակ 2014-296էջ.
7. **Գյուլամիրյան Ջ. Հ.** Խաղալով սովորենք, Երևան, 2009-77էջ.
8. **Գյուլամիրյան Ջ. Հ.** Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2015-315էջ.
9. **Թերզյան Գ. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ.,** Խոսք և հաղորդակցություն, Երևան 2016-88էջ.
10. **Թումանյան Ջ. Ե., Երիցյան Լ.** Մ.Գորիսի պետ. համալսարան: Կազմ.–Եր.: Վե Փրինթ, 2013-288 էջ.
11. **Խուդոյան Ս.** Անձի հոգեբանական զարգացման ճգնաժամային տարիքները Երևան 2004-248 էջ.
12. **Հանրկրթական պետական չափորոշիչ** ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. 29 օգոստոսի - N 1000-Ա/Ք հրամանի.
13. **Նախաշավիղ** գիտական հանդես 3-4 համար , Երևան, 2009.
14. **Նալչաջյան** Ա.Ա. Հոգեբանության հիմունքներ: Գիրք առաջին Երևան 2016-672էջ.
15. **Սուխոմլինսկի Վ. Ա.** Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կիև, 1969.
16. **Սարգսյան Վ.** և ուրիշներ Մայրենի2, Երևան 2010, 160էջ.
17. **Սարգսյան Վ.** և ուրիշներ Մայրենի 2 թեմատիկ պլանավորում 2010թիվ, 14էջ.

18. **Վարոյան Ա.** Շարժախաղեր, Երևան 2007 հեղինակային հրատարկություն, 159 էջ.

19. **Տեր-Գրիգորյանը Ա.** Խոսքի զարգացման մեթոդիակա, Երևան 1974-276էջ.

20. **Вайнер М. Э.** Не только талантливо мыслить, но и талантливо чуствовать// Начальная школа: плюс-минус. 2001, No 3.

21. **Волина В. В.** Веселая грамматика.– М.: Знание, 1995.– 334 с.:

22. **Выготский Л.** «Психология развития ребенка» Москва 2004г., 512стр:

23. **Немов Р.С.** Н50 Психология: Учеб. для студ. высш. пед. учеб. заведений: В3 кн. — 4-е изд. — М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2001.— Кн. 3: Психодиагностика. Введение в научное психологическое исследование с элементами математической статистики. — 640:

24. **Фридрих Ф.** «Будем жить для своих детей» Карапуз 2001г., 288стр :

Հավելված 1